ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/68 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք.Երևան **«28» «սեպտեմբերի» 2023թ.,**
ժամը՝ 9:30

Հանձնաժողովի նախագահ՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի տեղակալ Լուսինե Գասպարյան

Հանձնաժողովի անդամներ՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության
Նյութատեխնիկական ապահովման բաժնի ավագ մասնագետ՝ Սոսե Հակոբյան
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության
Վարչատնտեսական բաժնի ավագ մասնագետ՝ Արթուր Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների
կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Սոնա Շիրինյան

---

1. **«ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/68» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով էլեկտրոնային ձևով գնման ընթացակարգի հայտերի վերաբերյալ**

1.1 «**ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/68**» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 2023թ. սեպտեմբերի 26-ի ժամը 10:00-ն: Հակադարձ աճուրդը տեղի է ունեցել 2023թ. սեպտեմբերի 27-ին, Ժամը 10:00-10:30-ն՝ **eauction.armeps.am** համակարգի միջոցով:

1.2 Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	Մասնակցի անվանումը	Հեռախոս	ՀՎՀՀ
1	«Միռմոթորս» ՍՊԸ	+374 98 09 88 09	06968425
2	«Կոնսէլ» ՍՊԸ	+374 10 46 50 70	01539021
3	«ՊԵԿԱՌԴԱ» ՍՊԸ	+374 93 55 50 03	00201972

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

2. Տեղեկատվություն հարցումների և պատասխանների վերաբերյալ

2.1 Հարցումներ ստացվել են և պարզաբանումները ներկայացվել են սահմանված կարգով:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտի և հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.

3.1 Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

3.2 Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա է անճշտություն.

3.2.1 «Միռմոթորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես.

- Ներկայացված լիազորագիրը ստորագրված չէ տնօրենի կողմից,

- Բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարությունը /հրավերի հավելված 1.3/,
- առաջարկվող ապրանքի ամբողջական բնութագրում ապրանքային նշան, մակնիշ և արտադրողի անվանում դաշտերը թերի են լրացված, ինչպես նաև տեխնիկական բնութագրից անհրաժեշտ է բացառել «համարժեք» բառը:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

4. **« ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/68» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի վերաբերյալ**

<u>Գնահատող հանձնաժողովը որոշեց</u>

4.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը, հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և ծանուցել «Միռմոթորս» ՍՊԸ-ին, որպեսզի սահմանված ժամկետում շտկի նշված անհամապատասխանությունները:

4.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2023 թվականի հոկտեմբերի 2-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

Հանձնաժողովին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը

Հանձնաժողովի Նախագահ՝	Լուսինե Գասպարյան	
Անդամներ՝	Սոսե Հակոբյան	
	Արթուր Խաչատրյան	
Քարտուղար՝	Սոնա Շիրինյան	